

Englsp

Englsp. 6pt

29

9(47.925)

9-81

1925

05 OCT 2011

9/27.925/ Lampyris
9-81/ Lampyris 23

[illegible]

LIBRARY

29

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

 $9(47.925)$

9-81

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

3 Ե Ր Ե Կ Ա Ն—1925

678

19419-A

Cyclo 11247

LI

2068

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ. ԽՈՐՀՐԴ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Պրոֆեսորներ բոլոր յերկիրների, միացե՛ք:

ՅԵՂԻԱ ԶՈՒԲԱՐ

7.925)

-81

ՆՈՑԵՄԲԵՐԻ 29

(Հիշողություններ)

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академия Наук
СССР



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ—№ 222.

Յ Ե ր Ե Վ ա Գ—1925.



59936-66

ՆՈՅՆՄԲԵՐԻ 29

1. ՀԱՍԿԱՅՈՒՐՈՆ

1920 թ. Մայիսին բանվորա-գյուղացիական ապստամբությունը ջախջախվել էր:

Հաղախի հեղափոխական ապստամբ գյուղացիների գունդը քաշվեց Խորհրդային Ադրբեջանի հողը և տեղավորվեց Բազվում: Այդտեղ հավաքվեցին ապստամբությունը ղեկավարող կոմմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեյի անդամները և մյուս պատասխանատու ընկերները, վորոնց հաջողվել էր զազազած դաշնակիների ձեռքը չընկնել: Այդ ընկերներն էին՝ Ավիսը, Հայկազ Կոստանյանը, Շավարշ Ամիրխանյանը, Հովսեփ Պողոսյանը, Կոստիա Այվազյանը, Լևոն Ուլիբեկյանը, Մանսիա Բերբերյանը և ուրիշները: Սրանք էին, վոր Բազվում կազմակերպեցին Հայաստանի Կոմմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեյի Արտասահմանյան բյուրո, վորովհետև Հայաստանում տիրող դաշնակցական տերրորի տակ աշ-

խատելը մի առժամանակ անհնար էր։ Արտա-
սահմանյան բյուրոն Բազմից յերբեմն ընկեր-
ներ եր ուղարկում Հայաստան, այնտեղ թագուն
աշխատող ընկերներին ցուցմունքներ տալու և
նրանցից տեղեկություններ բերելու համար։
Շատ դժվար, վտանգավոր, մեծ քաջություն,
խորամանկություն ու հերոսություն պահանջող
գործ էր այդ ժամանակ Բազմից Յերեան գալը,
թագնված ընկերներին գտնելը, նրանց հետ տե-
սակցելը և ապա նորից աննկատելի ու առանց
կասկածի տակ ընկնելու և բռնվելու Բազու վե-
րադառնալը։ Բայց մենք ունեյինք այգալիսի հե-
րոս ընկերներ՝ որինակ Ժենիա Արեշյանը, Դո-
րոս ընկերներ՝ որինակ Ժենիա Արեշյանը, Դո-
րան, Բայբուրդյանը և մի յերկու հոգի ուրիշ-
ները, վորոնք գաղտնի ճանապարհներով, լեռնե-
րով ու անտառներով՝ մեծ մասը գիշերով եյին
այդ ծանր առաքելությունը կատարում։

2. ՂԱԶԱԽԵՑԻԳ

Ղազախի գավառի հետ կապ պահպանելն
ավելի հեշտ էր, փորովհետև մոտիկ էր Սորհըր-
դային Ադրբեջանի սահմանին։ Ամենից շատ
Ղազախ գնացող-յեկողը ընկեր Տիգրան Ղալթախ-
չյանն էր։ Նա ինքնուսուլթյամբ զարգացած
գյուղացի յեր, վոր միջանի տարի ծառայել էր
Դիլիշանի անսառապետության մեջ։ Այդ պաշ-
տոնն ունենալով, նա իր հինգ մատի պես զի-
տեր Ղազախի գավառի ամեն մի ծակուծուկը,
քողերն ու կածանները։

Մեր արտասահմանյան բյուրոն մի փոքր
սենյակ էր վարձել Բազմի նիկոլայևսկի փողոցի
վրա գտնվող հինգհարկանի մի տան ամենավե-
րին հարկում։ Այդ տանը տեղավորված եյին
Ադրբեջանի Կոմմունիստական Կուսակցության
Կենտրոնական ու Բազմի կոմիտեները, Վրաս-
տանի Կոմմունիստական Կուսակցության արտա-
սահմանյան բյուրոն և ուրիշ Կուսակցական մար-
մինները։

Մեկ ել տեսնում եյինք, մեր Տիգրանը, տրե-
խավոր, բարձրահասակ, կապուտաչյա, շեկավուն
թավ բեխերով, միշտ մաքուր ածիլված, կա-
պույտ փափախով, խուրճինն ուսին զցած, բար-
ձրանում է հինգերորդ հարկը՝ Զակբյուրո։

Տիգրանի յեկած որը մեծ տոն էր լինում Ավիսի, Կոստանյանի և մյուս ընկերների համար: Տիգրանը բերում էր դաշնակցական թերթեր, նամակներ Լազախի գյուղացիներից և թարմ տպավորություններ:

Դաշնակցական տերրորը զազբելի խրախճանք էր սարքում զազախի անաշտպան մնացած գյուղերում: Նեղում, բանտարկում, պատանդ վերցնում ու թալանում էյին Ադրբեջան գաղթած ապստամբ գյուղացիների ընտանիքներին: Վայը յեկել էր այն զազախեցի ընտանիքի գլխին, վորի անդամներից մեկն «ադրբեջանցի» էր դառել — «թրքացել էր», այսինքն ապստամբությունից հետո Բագու էր անցել:

Լազախի գյուղացությունը գնալով ավելի զրգվում էր դաշնակցական այդ «կարգերից» և անհամբեր սպասում, թե յերբ մեկ էլ «շասսի» վրա պիտի յերևա կարմիր աստղը, վոր վերջանա եդ դժոխքը:

Շուտով դաշնակցական տերրորի ու թալանի սարսափներին ավելացավ Բեմալ փաշայի արշավանքի սպառնալիքը՝ Ղարսից ու Ալեքսանդրապոլից հետո նաև Լազախին:

Այս բոլոր սև լուրերն ի հարկե հասնում էյին Լազախի ապստամբների գնդին, վոր այդ ժամանակ XI-րդ Կարմիր Բանակի 32-րդ դիվի-

զիայի մեջ էր մտնում, իբրև հատուկ հայկական պոլկ: Յես իբրև քաղղեկ այդ գնդումն էյի աշխատում: Տխուր էյին ու անհամբեր մեր տղերքը: «Մինչև յէրբ, ասում էյին նրանք, մենք պիտի եստեղ Կարմիր Բանակի կազիոննի հացն ուտենք, իսկ եստեղ «հայաստանցիները» մերոնց արյունը պիտի խմեն, ողլուշողի պատիվը տափովը տան: Հիմի ել ասում են ոսմանլուն ե գալիս... Ի՞նչ ա լինելու սրա վերջը, ընկեր պալիտրուկ»:

«Կոմունիզմի այբուբենը» լսելու և հասկանալու սիրտ ու ականջ չունեյին նրանք:

Հիշում եմ առաջին անգամ յերբ յեկա գունդ մի շատ կրակոտ ճառ ասացի, վոր լեհական Ղլախտան սպառնում է Խորհրդային Ռուսաստանին: պատմում էյի լեհ սպիտակների կատարած գազանությունները, կոչ էյի անում ամրացնելու Կարմիր Բանակի շարքերը: Յերբ վերջացրի, տղերքը, յերիտասարդները ծափահարեցին. մեծամասնությունը լուռ էր: Հարց տվողներ չեղան: Յերիտասարդ քաղղեկի համար ծանր բուպե է այդ: Հանկարծ մի զինվոր, գլխարկը հանում է, ամբողջ ույժով գեանին խփում և համարյա հեկեկալով, զայրացած, հուսակտուր կոչում.

— Հապա սրան ի՞նչ կասես. գեղից գիր ու-

նեմ, դաշնակները հորս զամուռն են վերցրել, վերջն ել հրամայել են վոր իր համար փոս փորի, խփել են ու են փոսի մեջ գլորել... Սրան ինչ կասես, ընկեր պալիտրուկ, բա սա հայրության ա... վերտեղ ես, Կարմիր Բանակ...

Միքանի որ ել լուր տարածվեց գնդում, վոր իրենց տանելու են Ղրիմ, Վրանգելի դեմ: Տղերքը հավատացել էյին և ավելի տխրել: Բանըն այնտեղ հասավ, վոր գունդը մի պատգամավոր ուղարկեց «Չակըյուրո» Ավիսի մոտ:

—Տղերքն ինձ քեզ մոտ են ուղարկել, վոր տեսնենք՝ ինչ ենք անում: Ասում են, հենց եսօր հրամայեք, պատրաստ ենք, մեն-մենակ, առանց Կարմիր Բանակի մինչև Յերևան գնանք՝ Խորհրդային իշխանության համար մատաղ լինենք:

Շատ շուտով պարզվեց, վոր գնդում տարածված լուրը պրովակացիա չէր՝ Բազվի դաշնակների ու խանութպանների ոձ սրտից դուրս յեկած: Նրանք ամեն կերպ աշխատում էյին քայքայել ղազախեցի ապստամբների գունդը: Մի անգամ, հիշում եմ, յերբ մեր գունդը Հայկավանից (Արմենիքենդից) Ստանիսլավսկի փողոցով քաղաք եր իջնում պահակային ծառայություն կատարելու համար—տղերքը մի յերգ սկսեցին—մեջը վարդ, գարուն, վերջումն ել Զեյթունի մարշը: Բոլոր հայ խանութպանները փո-

ղոց էյին թափվել և դիտում էյին «հայոց պուկը»: Ականջիս դիպավ մի վարժապետանման տիպի այս հեղնական խոսքերը.

—Սրանք մերոնք են. ինչ բայլչեիկ, ինչ քոսանաումեյե, միամիտ Ավիսներ...

Արունը գլխիս խփեց: Գիշերը լուսացրի, տնքալով մի յերգ գրեցի՝ Ղազախի ապստամբ հեղափոխական գնդի յերգը: Գրածս յերգեցի գնդի յերեկույթում, հավանեցին. յերիտասարդները միքանի գիշերվա մեջ՝ չունգուրի նվագակցությամբ սովորեցին իրենց յերգը և մի քանի որից հետո այդ յերգն եր, վոր Ստանիսլավսկի փողոցի հայ դուքանչիները ու վարժապետների աչքերը հանեց ու հետն ել ալանջները ծակեց:

Մի որ ել զորանոցում գնդի հրամանատարի ոգնական ընկ. Բաղդասարյանը հայտնեց, վոր տղերքը պատրաստ լինեն գիշերը մեկնելու:

Նորից հուզմունք, անհանգիստ հարցեր.

—Ուր պտենք գնալ. Ադստաֆա, Ռուսաստան:

Մի կերպ ինձ հաջողվեց իմանալ ընկ. Բաղդասարյանից, վոր մեր եշելոնը գնալու յե Գանձակի ուղղությամբ: Ակնարկներով հասկացրի տղերանցը:

Են որը մինչև ուշ գիշեր տղերքը յերգեցին Ղազախի բոլոր յերգերն ու պարեցին բոլոր պարերը:

3. ՍՈՒՄԱՆԱԳԾՈՒՄ

Նոյեմբերի 17-ին Կենտկոմի վորոշմամբ չորս հոգով Բագվից յեկանք Ղազախ քաղաքը: Այստեղից տարբեր ճանապարհներով Հայաստան պիտի անցնեյինք՝ աշխատանքն սկսելով Ղազախ գավառից և Լոռուց:

Մեզ հրահանգված էր վերականգնել մայիսյան անհաջող ապստամբությունից հետո քայքայված կուսակցական կազմակերպությունները և ըստ կարելույն շտապ տեղեկություններ ուղարկենք Բագու Հ. Կ. Կ. Կ. իրերի դրության մասին:

Տիգրան Ղալթախչյանի հետ յեկել ենք հայ ադրբեջանյան սահմանագլուխը: Թրքական փորձրիկ գյուղ է: Մոտավորապես մի վերստ զենր գտնվում է «Ուզունթալա փոշտը» — սահմանը:

Ադրբեջանյան սահմանակետն այստեղ պահում էյին յերեք ուսու կարմիր զինվորներ: Մեր գալու ժամին նրանք թունդ առևտրի վրա էյին. սահմանի են կողմից յեկած մի փասլոտ բիձալից մեղր էյին գնում:

Բիձեն Տիգրանին տեսնելուն պես ճանաչեց, վոտի յելավ ու բարեկեց նրան:

Հարցրի ուսու կարմիր զինվորին, թե վճիռ էք սահմանը յերեք հոգով պահում:

— Դու ել բան ասացիր, — հեգնեց ուսու: Ումնից պահենք: Հայ զինվորներն ամեն որ մեզ մոտ հյուր են գալիս: Զրույց ենք անում վոնց վոր յեղբայրներ: Խեղճերը շատ են ուղում մեր կողմն անցնել, բայց վախենում են թուրքերից:

Առավոտյան ժամը 10-ին մի թուրքի ողալում, տաք ոջախի շուրջն արդեն հավաքված էյին 4—5 գյուղացի և յերեք զինվոր սահմանի են կողմից: Իմ հյուրերիս հետաքրքրությունը բավարարելուց հետո Ռուսաստանի դրության վերաբերմամբ, սկսեցի հարցեր տալ Հայաստանի վիճակից: Վոչ վոք տեղյակ չեր, թե ինչ է կատարվում Դիլիշանից դենը: Սակայն դրությունը Ղազախում միանգամայն պարզ եր: Սահմանապահ զինվորները զինված ցրվում են իրենց տները: Շամշադինի սահմանից Ադրբեջան են անցել 15—20 զինվոր և մի սպա՝ գնդացիրով ու հրացաններով:

Ուզունթալի պոստի սպան նույն մտադրությունն է ունեցել և այդ պատճառով նրան փոխել են:

— Տհենց ա, ասաց մի ժիր յերիտասարդ զինվոր՝ Տիգրանի ազգականը: Մայիսին դաշնակը չուզեց Կարմիր Բանակին ընդունել, դե թող հիմա ջառմեն քաշի ոսմանցու ձեռքից: Մեղք վոր ժողովուրդն ա անմեղ կոտորվում:

են գյուղացիները, վորոնք Մայիսին ողնելիս են յեղել դաշնակներին, այժմ շողոքորթում են և փափախ հանում Կարմիր Բանակ ուզող գյուղացիները առաջ:

Յերկար ճառելու կարիք չկար: Գյուղացիք և զինվորները պարզ ասում էին, վոր ուզում են «ճանապարհը բաց անել, փողտը վերացնել», այսինքն ընդունել Խորհրդային իշխանութիւնը: Նրանց սրտում միայն մի վախ կար՝ արդյոք «Կարմիր Բանակը» նրանց ոգնութեան կըզա, թե՞ մայիսվա նման «Իրիկունը կարմիր աստղը կըտեսնենք, իսկ առավոտուն մառգերի ունիւր»: Յեւ նրանց միայն մի բան կարողացա հավատացնել, վոր մայիսվա պատմութիւնը չի կարող կրկնվել, վոր այժմ դաշնակցութեան մեջքը կոտորված է, վոր այժմ Ռուսաստանի Կարմիր Բանակի ույժերն ազատված են Վրանգելի փառնգից:

«Մեզ շատ մեծ ոգնութիւն պետք չէ, վրատվեց սեքարեցին, թող մեր դադախեցի տղերքը յերևան Ուզունթալի փողտի մոտ, մենք գիտենք թե ինչ կանենք:

Վերջը գյուղացի «պատգամավորները» վորոշեցին գնալ իրենց գյուղերը և խորհրդակցել, թե գյուղն ինչ կապի:

Բուք ու բորան եր:

Յեվ հետը անձրև:

Ասում են բոլոր մեծ պարտութիւնները պատերազմներում այսպիսի յեղանակներին են լինում:

Պարտվում եր նաև Դաշնակցութիւնը:

Ոչախի կողքին նստած, այս մտքերն էին ինձ կյանել:

Ու բուք ու բորանի մշուշին աչքերս հառած սպասում էի, թե գյուղացիները յէրբ կըհայտնվեն, թե «գյուղն ինչ է ասում»:

Յեվ «գեղը» խոսեց.

«Մենք չենք ուզում վոչ հայ, վոչ ել թուրք դաշնակներին: Մենք ուզում ենք վոր խաղաղութիւն լինի: Մենք սպասում ենք Կարմիր Բանակին, մեկ ել մեր դադախեցի տղերանց, վոր սովետակի վրաստ ընդունենք»...

Ես էին ասում համարյա բոլոր են համախոսակները, վոր գյուղացի պատգամավորները բերել էին Ուզունթալից, Հաշաշրից, Սեբաւրից և մյուս գյուղերից:

— Գլավեքն ել մեզ հետ են, ես ել նրանց պեչատը, ես ել նրանց ձեռքը, ծիծաղում էին «գեղի մարդիկը» գյուղապետական կնիքներով ու հարյուրավոր ստորագրութիւններով համախոսակներն ինձ տալով:

Գյուղացիք շտապեցնում էին ինձ, վոր շուտ հայտնեմ Բագու Կարմիր Բանակին:

Հանգստացրի նրանց և ասացի, վոր հետևյալ առաւիտ անցնելու յեմ իրենց գյուղերը:

—Արխային կաց, հանգստացրին գյուղացիք, գլխիդ մազի թելը չի ընկնի: Մեյդանը մերն ե:

Հաշաջուրցի եմիգրանտ Սհակի հետ գնում ենք դեպի Հայաստան:

Ճանապարհին պատահեցինք միքանի հաշաջուրցիներ, վորոնք մեզը եյին բերում՝ Ղազախում ծախելու համար: Ուրախ-ուրախ մոտեցան նրանք Սհակին, առանձին հարգանքով բարևեցին ինձ: Յես ձիւ կամաց քշեցի առաջ. ականջիս հասան գյուղացիների հետևյալ խոսքերը.

—«Ա՛ջդ լույս, Սհակ, հիմի արխային, թըվանքդ գցած գնա տուն...»

Բան չհասկացա:

Միքանի րոպե անց Սհակը յետևիցս հասավ և սկսեց քահ-քահ ծիծաղել:

—Ի՛նչ կա, Սհակ:

—Ծիծաղ ա, ընկեր Չուբար, թամամ ծիծաղ: Ուզունթալըցիք լսել են, վոր Կարմիր Բանակը գալիս ա ու դհոլ-զուռնայով յեկել են դիմավորելու: Սրանք ել կարծում են, թե դուք բանակի մեծերիցն եք ու հարցնում են, թե ո՛ւր ա Կարմիր Բանակը:

—Դու ի՛նչ ասացիր:

—Ասացի, վոր ճիշտ ա, Կարմիր Բանակը գալիս ա. վո՛նց եք, հմի ռազմ եք, վոր Կարմիր Բանակը գա: Յես սրանց ճանաչում եմ, ընկեր Չուբար. ես յերկուսը մայիսին մեզ վրա քար քցողներից են, յես նրանց...

—Դե, Սհակ ջան, ինչ վոր ել լինի, խե՛ր ա:

—Խե՛ր ա, ընկեր Չուբար:

—Դե վոր ըտենց ա, քշի ձիդ:

Իջանք մի թուրքի տուն, վոր Սհակի քիր-վաներից եր:

—Ա՛յ Սհակ քիրվա, ինչ վոր լինելու յե, շուտ լինի, դուք ել ձեր մուրազին հասնելիք, ձեր տները վերադառնայիք, մեկ ել ես անիծված սահմանը վերանար, մեր տավարը ես ամառ ել չկոտորվեր, մեր յեյլաղի ճանապարհը բացվեր:

—Շուտով խե՛ր կրլինի, հասկացրի յես նրան միքանի խոսք թուրքերեն իրար կապելով:

Իրիկվա մթի դեմ ճանապարհվեցինք, վոր մթով Սեբար մտնենք:

—Տղերք, վո՛րն ե սահմանը Ադրբեջանի և Հայաստանի միջև:

—Միքանի որ առաջ ես քարն եր, ցույց տըվեց սեբարեցին, իսկ հիմա սահմանը ենտեղ ա, վորտեղ վոր բայլշեկի վոտը կոխի:

Դիշեր եր արդեն, յերբ ցեխ ու ձյուն կոխալով մտանք Սեբար և ուղիղ գնացինք «Սհակ դայդ» տունը:

Քիչ հետո Մհակ դայու լավ տաքացրած սենյանիում հավաքվեցին 10—15 հոգի գյուղացիներ։ Մեծ մասը յերիտասարդ 20—25 տ. զինվորներ էյին։ Բոլորն էլ Մայիսին մասնակցողներից։ Նրանցից յերկուսը դեռ նոր էյին ազատվել Դիլիջանի «բերդից»։

Ներկա էր և Սեփարի գյուղապետը՝ «կամիսար Յեղիշը»։ Նա շատ էր ուզում մնալ ժողովին, բայց նրան հասկացրին, վոր իր տեղը չէ։

Շատ մազալու կամիսար էր եղ Յեղիշը. եղ հաստիկ, կարմրաթուշ մարդը. դրա կամիսար դառնալն էլ իր պատմությունն ունի։ Յերբ դաշնակցական կառավարությունը Մայիսից հետո Յեղիշին նշանակում է գյուղի կամիսար, նա գալիս է Ղազախ քաղաքը և ընկեր Ամիրխանյանից հարցնում՝ ընդունի թե՞ չընդունի «իշխանության լուծը»։ Յեվ ստանալով ընկեր Ամիրխանյանի սանկցիան, Յեղիշը դառնում է գյուղապետ։ Յեղիշն ենքան էլ հիմար չէր։

Նախքան կոմբլիշը վերակազմելը, փոխադարձ ինֆորմացիա տեղի ունեցավ։

Տեղումն գտնվող ըոտան, վոր բաղկացած էր վոչ զազախեցիներից, իր սպայի հետ միասին ուղեցել է նույնպես «ճղել»։ Սեփարեցի ընկերներն իմանալով այդ բանը, զինաթափ են առել բոլորին, խլել նրանց մթերքները և ապա

«հայաստանցիներին» բաց թողել, ուր վոր ուզում են գնան։ Ամեն որ խումբ-խումբ սպաներ սարերով անցնում են դեպի Թիֆլիզ։ Մայիսյան ապստամբությունը ճշող հարուստներից շատերը նույնպես փասափուսեքը քաշում են դեպի «հանգիստ» Թիֆլիզը։

Նոր բանտից դուրս յեկած ընկեր Հակոբը ընտրվեց Սեփարի հեղափոխական ույժերի զինվորական ղեկավար յերիտասարդ և նրան հանձնարարվեց զինված ըոտա կազմել։ Ժողովի կիսին ներս ընկավ մի նոր ընկեր ու հայտնեց, վոր հարևան տանը հարսանիքում շրջանի պրիստավը, վոր միքանի կոմսոնիստների գնտակահարել էր՝ քեփ է անում և կովի յե բռնվել Մհակ դայու հետ։

Ես վոր լսեցին յեաչեյկայի անդամները տաքացան և միաձայն ինձնից թույլտվություն խնդրեցին «շանսատակ անել այդ հարամուն»։

— Սրան վոր վերացնենք—մեր կողմը շատերը կանցնեն, առարկում էյին ընկերները։ Գյուղացիք մեր կողմն են սրտանց, բայց ելի վախում են պրիստավից ու իրա սորաժնիկներից։

Մինչ այդ ներս ընկավ կատարը բավական տաքացած Մհակ դային և հանգստացրեց յերիտասարդներին, վոր ինքը՝ իր ու կարմիր Բանակի պատիվը պայծառ է պահել և թույլ չի տա

յերիտասարդներին հարսանիքի տանը սպանել
պրիստավին ու դրանով հարամ անել իր հարե-
վանի ազիզ որը:

Հաջորդ որը պրիստավը սպանված էր:

Ինձ վորեւե որինական վկայական էր հար-
կավոր, վոր առանց կասկածի տակ ընկնելու
մինչև Դիլիջան գյուղերով անցնեմ: Կանչեցին
հարսանքատանից կամիսար Յեղիշին ու ասին
վոր մի «դաստավեռնի» գրի: Հարբած Յեղիշը
բոլորովին փափկել էր. Մհակ դայի, Ակոփ ջան,
գուբ ինձ ընչի՞ տեղ եք դնում. ելի ասեմ, վոր
սրտով ձեզ հետ եմ, Բագվից յեկող տղերանց
հետ եմ: Յերբ քնեցի, յես արդեն «կոտիքենդցի
Սարգիս Կարապետյան եյի ու ինձ թույլ եր
արված Բողիքենդից տան համար կարսոֆիլ բերել:

Մենք Հաչաջուր եյինք:

Ծանր սրտով, լուռ ու մունջ, մոտեցավ իմ
ուղեկից Մհակը իր ավեր տան դռանը: Դաշնակ-
ները հիմնավորապես թալանել էյին նրա տունը:

Տան դռները և փեղկերը տախտակներով
մեխված էյին: Ծան հաջոցի վրա դոմից մեր
դեմ վագեց Մհակի մայրը, բացականչելով.

— Բոյիդ գուբբան, բալաս, աչքս ջուր կտրը-
վեց ճամբիդ մնալով, գուշմանի տունը քանդվի,
ու փաթաթվեց Մհակի վզին:

Մհակը վռչինչ չղատախանեց. հա նայեց իր

շուրջը և աչքերի վրա պինդ քաշեց իր մոթալ չալ
փափախը: Միայն թավ բեխերի շարժումից հաս-
կացա, վոր Մհակը կրճտացնում էր առամները:

Քիչ հետո Մհակի փոքր յեղբայրը բաց ա-
րեց դուռն ու պատուհանները: Յեռթ ամսվա
դադարից հետո նորից միաց Մհակի տան ոջա-
խը: Մայրը հավի նման պտույտ էր տալիս իր
Մհակի շուրջը և պատմում էր իրեն գլխին յե-
կածներից՝ դաշնակների կերած ծեծից, բանտար-
կությունից, տված կաշառքներից, թալանված մա-
լից ու մուլքից:

Տաք ոջախի կոխքին նստած, վոսներս տա-
քացնելով դիտում էյի Մհակի տան պատերը: Դի-
մացի պատի վրա աչքիս ընկան միքանի հայ-
դուկային խմբերի լուսանկարներ: Դուռանի խուռ-
բը, սեքարեցի Սաքոն, Անդրանիկի նկարը, Մահ
կամ Ազատություն եայլն:

Ջարմացա: Բայլշերիկ Մանկն ուր, Դուռանն
ուր: Մհակը կարծես հասկացավ մտքերս ու թավ
բեխերի տակից ժպտաց.

— Յես ել կամ Դուռանի խմբի մեջ, այ աջ
կողմը. վերջումը: Քեռի խմբումն ել եմ յեղել...

Ու հետո թեժացնելով ոջախի կրակը, շա-
րունակեց.

— Դուռանը, Սաքոն սրբեր էյին, նրանք դաշ-
նակներ չէյին: Ո՞վ էր խմանում, վոր վերջը
անեց պտեր:

Յեւ չա նորից աչքի տակով անցկացրեց
դաշնակների ձեռքով թալանված տունը:

— Վոչինչ, պատահում ա, ասացի յես Սհակի
տխուր մտքերի շարանը կտրելու համար:

Այո, դաշնակցությունը պիտի մեռնի, վո-
րովհետեւ նույնիսկ նախկին հայդուկները ոխ, քեն
ու զենք ունեն նրա դեմ:

Իրիկնամտին Հաչաճրի կոմբլիճի կազմակեր-
պողը յերիտասարդ, վառվռուն զինվորներն եյին
անգլիական շինեղներով: Յերեկ ազգայնական
Ֆրոնտից զինվորներ եյին, իսկ այսօր նրանք
կարմիր Բանակին կամավոր զրկեցին: Իսկ վոր՝

«Մենք կնքվեցինք քառասունմեյեց,

Ձեստնի բայլշեիկ»:

Տղերանց մոտ բավական զենք կար: Յեա-
չեյկայի նիստից հետո ընկերները իսկույն դուրս
յեկան, վորպեսզի Սհակի յեղբոր ղեկավարու-
թյամբ Հաչաճրի կարմիր բոտան կազմակերպեն:

Լուսադեմին յես պիտի մեկնեյի Դիլիճան:
Ձին ու սայլը պատրաստ եյին արդեն... վոր-
պեսզի «Բողիքենդից ընտանիքիս համար 5 փ.
կարտոֆիլ բերեյի», բայց յես սպասում եյի, վոր
Քարվանսարայից վերադառնա Հաչաճրի պա-
շտանին, նրան մյուս գյուղերի «պաշտանիների»
հետ գավառական կոմիտարը հրավիրել եր մի ինչ-

վոր կարևոր ժողովի: Այդպես եր ասում հաչա-
ճուրցի գյուղապետը, բայց կեսորվա հացի սուփ-
րեն բաց արինք թե չե, դուռը բացվեց, սենյա-
կը լցվեց գոլորշիով ու գոլորշիների միջից դուրս
յեկավ մի սպիտակահեր բայց կայտառ ծերունի:
Պաշտոնին եր, վոր ուղիղ յեկել եր Սհակի մոտ:

Ծանոթացանք: Պաշտոնին պատմեց իրենց
ժողովից: Փրոնսուսմը դաշնակների գործերը լավ
չեն: Ոսմանցին հասել ե Բոգիքենդ (կորսվ կար-
տոֆիլս): Յերևանում նոր կառավարություն ե:
Նախագահը վրացյանն ե: Կառավարության մեջ
մտել են ինչ-վոր յերկու մարդ, վոր դաշնակներ
չեն, բայց չգիտեմ ինչ կուսակցության մար-
դիկ են...

— Հա, մեկի անունը Խոնդակարյան ե, վեր-
ջապես հիշեց ծերունին:

Յես բացատրեցի, վոր դրանք ես-երներ են:

— Թող լինի, վրա տվեց գյուղապետը. Թա-
ղա մարդիկ են, խեր ա:

— Ձահրումար ա, խեր չի, մըրթմըրթաց
Սհակը:

— Բա ի՞նչ ա լինելու վերջը, դիմեց ինձ
պաշտոնին:

— Իրեն ես հարցնում, դու ես ժողովիցը
գալողը, կառավարության մարդիկը ի՞նչ ասին քեզ:

— Դե, իրանք ել չեն իմանում: Ասում են՝
զորքին հաց տվեք:

— Դե վոր գորքը մենք ենք, մենք ել են ա հացը ուտում ենք, ելի՛, քրքջացին զինվորները՝ յեաշեյկայի անդամները:

Տղերքը զիտեյին թե ինչ են անելու, նրանց համար սրանից զենը հանելուկ չկար:

Սհակը, վոր մինչ այդ լուռ եր, մի մեծ գե-
րան դրեց ոջախի մեջ ու ասաց.

— Մարգը վոր մեռնում ե, նրան թագա շո-
րեր են հագցնում: Դաշնակներն ել մեռնում են,
եա-հրները շորեր են հագնում: Հաշիվը մին ա,
յերկուսն ել մի փոսումը կրթաղենք:

Այսպիսի մի խոսակցության վրա եյինք,
յերբ դրսից լսեցինք՝ ուռն, բացականչությունը:

Դուրս ընկանք: Տեսնենք մեր զինվորները
շտապ ձի են նստում ե ուռն վանչելով զեպի
շոսեն քշում:

— Տղերք, ինչ կա, ուր եք քշում:

— Գալիս են, գալիս:

— Ո՞վ:

— Մերոնք:

— Սհակ, ինչ կասես:

— Ի՞նչ պաի ասեմ:

— Դե, աչքդ լույս, Մարիամ խնամի, շնոր-
հավորում ե պաշտանին Սհակի մօրը, վոր այդ
ըռպեյին յերեսն եր խաչակնքում:

Դյուղապետն ել ինձ եր շնորհավորում:

— Դե, ընկեր, հմի յես ել կըպրծնեմ կամի-
սարությունից: Ի՞նչ վոր կարողացա, արի, ձեր
տղերանց պահեցի, երդումիս հակառակ գնացի:
Հմի ինձ ազատ արեք պաշտոնից: Դե Սհակ, վեր
կալ իմ գլավայական գավազանը:

Այդ ըռպեյին մեզ մոտեցան յերեք տղա՝
փոքրից գլուխ զինված ու Սհակի ախանջին ինչ
վոր բան փափսացին:

Սհակը պատասխանեց.

— Բռնեցեք, լավ եք անում. են չողտին ել
չմոռանաք:

Տղերքը գնում եյին «հականերին» բռնելու:

Դյուղում անասելի կենդանություն տիրեց:

Մարգիկ կտուրներն եյին բարձրանում, զե-
պի շոսեն նայում, փողոցներում վազվզում:

Այ, այնտեղ մի կին փաթաթվել ե Կարմիր
զինվորի վզին ու պոկ չի գալիս, յերեխեքը կախ-
վել են փեշից:

— Ձեր պոլիկից ա են տղեն, ընկեր Ձու-
րար, ասաց Սհակը: Վոնց վոր յերևում ա, մեր
ղազախեցի տղերքն են առաջինը մտել Հայաստան:

Մի ժամ հետո յերեքով յես, Սհակն ու
Գյուղապետը քշեցինք մեր ձիերը զեպի Իջևան, ուր
մեր յենթադրությամբ պետք ե լիներ զազախե-
ցիների գնդի շտաբը: Ճանապարհին միքանի տեղ
պատահեցինք զինված խմբերի, վորոնք նույնպես
գնում եյին Իջևան:

Կարծում եյի թե մեր գնդից կըլինեն:

—Ո՛ւր եք գնում, ընկերներ:

—Իջեման:

—Վո՞ր պուկից եք:

—Պուկից չենք:

—Բա ո՞վ եք:

—Սեվ քարից ենք, գնում ենք մեր սղե-
րանց հասներ:

Քարվանսարայը մեր զորքի առաջավոր զիւ-
քըն ե: Առաջինը մտել են դադախեցիների գնդի
ձիավոր 15 հետախոյզներ:

Վոչ մի ընդհարումն դաշնակների հետ չի յե-
ղել: Փոքրիկ դիմադրութունից հետո շտաբի ոֆի-
ցերներն անձնատուր են յեղել:

Այս եր պատմում գնդի ծանոթ պուլիտրուկ-
ներից մեկը: Նա ժամանակ չունեւր. դրոշակներ
ու լոգուններ եր պատրաստում կարմիր Իջեմա-
նի կուլբի համար:

—Ավիսը հրեն տերտերին տանն ա իջել,
ճամբան ցույց տվեց մի զինվոր:

Եւ գիշեր Մոսկովայի բաղնիկ կայանում լըս-
վում եր.

«Մոսկվա, Կրեմլ, Լենինին.

Թող հայտնի լինի համաշխարհային հեղա-
փոխության առաջնորդին, վոր Ղազախի ապըս-

տամբ դյուղացիք, դաշնակցական լուծը տապա-
լելով, Հայաստանը Խորհրդային են հայտարարել»:

Յեվ այդ լսում եր ամբողջ աշխարհը:

Գործ շատ կա: Կասյանի ու Ավիսի հետ ա-
րագ-արագ դատարկում ենք Յբաթակ տաք թեյ և
մեր քայլերն ուղղում դեպի շտաբ, ուր տեղավոր-
վել ե հեծելազնդի պետ Կուրիշկոն իր ընկերնե-
րով: Դա այն տունն ե, ուր ընդամենը կես թե
մի ժամ առաջ Ղազախի միլիցիական գնդի շտա-
բըն եր տեղավորվում: Ներս ենք մտնում: Մե-
րոնք փայտ չեն խնայել՝ սենյակները տաքացնե-
լու համար: Խախտ Կուրիշկոյի խախտ սղերքը վոչ-
խար են մորթել և իրենց սիրելի պետի համար
«հալուշկի» են յեփում ու տեղական չաղ վոշխար-
ների գովքն անում: Իսկույն իմ աչքին ընկան
սեղանների գլխին, պատերի վրա կարմիր
ու կապույտ մատիտներով գրված՝ ինձ հա-
մար միանգամայն նոր տիտղոսներ՝ «պարեո»,
«համհարզ» ևայլն: Դառն ծիծաղ սլթվկաց ներ-
սումս, վո՞րքան փքուն ազգային արտաքին ազ-
գակործան մի զինվորական ույժի համար: Ոգու-
տըն ի՞նչ:

Կուրիշկոն Կասյանին ընթրիքի հրավիրեց
խախտին հատուկ անպակաս ժպիտն յերեսին, իսկ
Ավիսին ու ինձ մի զինվոր հրավիրեց մի մուլթ

սենյակ, ուր մեզ սպասում էին միքանի ձեր-
բակալված դաշնակցական զորքի սպաներ: Լույս
պահանջեցինք. նավթալամպի լույսով տեսանք
չորս-հինգ սպա, վոր բարեվեցին մեզ:

— Ի՞նչ կա, ինչո՞ւ կարող ենք ծառայել ձեզ,
պարոնայք սպաներ:

— Մի խնդիր ունենք, ընկեր Ավիա: Ավիար
թեև կմշտեց՝ ընկեր....

— Պատրաստ ենք լսել:

— Ճի՞շտ ե, վոր մեզ Ադրբեջանի կառավա-
րությանն են հանձնելու:

— Հայաստանի Հեղկոմն այդպիսի կարգա-
դրություն չի արել, իսկ ձեզ պատժել կամ նե-
րել ուրիշ վոչ վոք իրավունք չունի:

— Բայց ի՞նչ ե մեր մեղքը:

— Կովի ժամանակ մեղքի մասին չեն հարց-
նում: Յերբ մեր հեղափոխական Ղազարի գնդի
զինվորը 15 զինվորներով ձեր այս շտաբին մո-
տեցավ, դուք գիմադրություն ցույց տվիք: Ահա
ձեր մեղքը, յեթե կուզեք: Դուք ընդիմանում եք
Հայաստանի աշխատավորության կամքին:

Լուռթյուն:

— Բայց այնուամենայնիվ, մեր ցանկու-
թյունն ե, վերջին ցանկությունը, յեթե կուզեք,
վոր մեզ դատի հայ աշխատավորությունը և վոչ
թե ադրբեջանցիք:

— Հենց դրա համար ել մենք յեկել ենք Հայ-
աստան, հանգստացրեց Ավիար:

Քունս չի տանում: Շտաբի առաջ, բակում,
կրակ եյին վառել դաշնակցական զորքի հայ զին-
վորները և անհոգ, թիթեղների կտորների վրա
լավաշ են թխում իրենց հունցած խմորից:

— Ի՞նչ մարդիկ եք, տղերք:

— Պլեն ենք, ասում ե ծիծաղելով հացթու-
խըն ու լավաշը շուռ տալիս թեժացած թիթե-
ղի վրա:

Հարցուփորձ եմ անում յեղբայրներիս
մասին, վոր դաշնակցական զորքի սպաներ եյին
և զինվորները ճանաչում են, գիտեն վորտեղ են:

— Բա ետ վո՞նց, դու եստեղ, յեղբայրդ են-
տեղ, յեղբայր յեղբոր գեմ, զարմանում ե նույն
ժրագլուխ հացթուխը. համա՞ ժամանակներ են
հա....

— Թագա ժամանակ, թագա որենք, փիլիսո-
փայում եմ յես ու «զիշեր բարի» մաղթելով հե-
ռանում:

Ավիսի հետ ստուգում ենք պոստերը: Բոլո-
րը իրենց պոստերում եյին: Լուսնյակ գիշեր եր
ու վշվշում ե գեալ: Մարերի լանջին մշուշ եր:
Լուռ զնում եյինք: Վտանքիս տակ խշխշացնում
եր ձույներ:

— Սպասիր, Չուբաբ:

Կանգ առա:

— Լսում ես:

—Լսում եմ, դետն աս:

— Լավ յերկիր աս, չե՞, անիծվածը:

—Համ լավ ա, համ մերն ա, Ավիս-Ջան:

— Դուք ես ասում:

Դե վոր ետեհց, փափախդ հանի:

Յեզկանգնեցինք միքանի վայրկյան փափախներս հանած այն պարզ յերկնքի տակ, գետի խշխշոցի դեմ, խորը լուռթյան մեջ:

Իսկ մոտակայանից զինվորները յերգում
էին:

« Գնան բարոյ,

Զգաստ տարով,

Պարոն Խատիսով,

Այս յերկիրը մերն ա հիմա,

Մերն ել կըմնա:

Չորս տարուց ավելի ե անցել այդ պատմա-
կան գիշերից ու այս երկիրը զեռ մերն ե—բան-
վորինն ու գյուղացունը: Յեվ ելի կըմնա—մեզ-
նից ե կախված:

ԿԵԳԳԵ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ:

Կեցցե՛ նոյեմբերի 29-ը:



ԳԻՆՆ Ե 10 ԿՈՊ.

Հայաստանի Ազգային գրադարան



NL0421116

14055